

Հասմիկ Ղազարյան, բ.գ.թ., դոցենտ,
 ակ. Ս. Արքահայկյանի անվան հայոց լեզվի ամբիոն
 E-mail: Hasmik.ghazaryan@mail.ru

**ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ 80-90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
 ԱՐՑԱԽՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻՆ**

Հայրենիքի կորստյան տագնապները և ազատագրական պայքարի թեման 20-րդ դարի 80-90-ական թվականներին որակափոխեց արցախյան պոեզիայի ինչպես բովանդակությունը, այնպես էլ ձևը: Փոխաբերությունը՝ որպես ոճական միջոց, դարձավ արցախյան պոեզիայի առանցքը և Արցախի բանաստեղծների համար ծառայեց միջոց ոչ միայն իրենց խոսքը պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու, այլև շոշափելու այնպիսի թեմաներ, որոնց մասին խորհրդային շրջանում արգելվում էր խոսել, և որոնք ազգային-ազատագրական շարժման տարիներին նշանավորեցին նոր շրջան Արցախի բանաստեղծների ստեղծագործական կյանքում:

Բանալի բառեր՝ Արցախյան պոեզիա, փոխաբերություն, անձնավորում, փոխանունություն, խորհրդանիշ, պատկերավորման համակարգ, ազգային ազատագրական շարժում, խոսքային միջավայր, ոճական գործառույթ:

Асмик Газарян

РОЛЬ ПЕРЕНОСА В АРЦАХСКОЙ ПОЭЗИИ 80-90 ГГ. 20 ВЕКА

Тема тревог, потери Родины, освободительного движения изменили как содержание, так и форму арцахской поэзии 80-90гг. 20 века.

Перенос как стилистическое средство стал стержнем арцахской поэзии, и для поэтов Арцаха служит не только средством красочного и выразительного изображения, но и затрагивает такие темы, о которых в советское время запрещалось говорить, и которые в годы национально-освободительного движения ознакомили новую эру в творчестве арцахских поэтов.

Ключевые слова: арцахская поэзия, перенос, олицетворение, метонимия, символы, изобразительная система, национально-освободительное движение, речевая среда, стилистическая функция.

Hasmik Ghazaryan

THE ROLE OF METAPHORE IN THE ARTSAKH POETRY OF 80-90ss. OF 20TH CENTURY

The fear of homeland loss and the theme of liberation struggle brought a quality change to both the content and form of Artsakh poetry in the 80-90s of 20th century. Metaphore as a stylistic mean became the core of Artsakh poetry and served for Artsakh poets not only as a mean of making the speech illustrative and expressive but also for touching upon the topics that were forbidden during Soviet period and which, during the years of national liberation movement, marked a new era for Asrtakh poets.

Keywords: Artsakh poetry, metaphor, perosnalization, substitution, symbol, visualization system, national liberation movement, verbal environment, stylistic function.

Խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանի ունեցած հողային կորուստներից մեկը եղավ Արցախը: Արցախ աշխարհի մեկ մասի վրա Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ստեղծումը ոչնչով չկարողացավ պակասեցնել կորստի տարողությունը: Մարզի սահմաններից ներս թե դուրս գտնվող Արցախի հայությունն էլ իր այս դրությամբ գրկվեց ազգային կյանքի մեջ իր ունենալիք բնական դերից և դրվեց ազգային մաշումի ու շնչահեղձության դժվար պայմաններում: Դա, անկասկած, խորհրդային դիմակ հագած պանթուրքիզմի հաղթանակն էր: Հաջորդ իշխանություններն էլ հաստատեցին ու օրհնեցին այդ անարդարությունը:

Գտնվելով Ադրբեջանի իշխանության տակ՝ ի սկզբանե բզկտված Արցախի աշխարհի մեջ, այնուհանդերձ, անկարելի եղավ կասեցնել հայ գրականության ընթացքը: Հայաշունչ Արցախն իր դպրոցներով, մամուլով, գրչի ու գրականության մարդկանց ջանքերով շարունակեց իր ներդրումն ունենալ հայ գրականության մեջ: Սակայն, ինչպես Խորհրդային Միության այլ շրջաններում, այնպես էլ, բայց առավելագույն չափով Ադրբեջանում, հայալեզու գրականությունը փորձում էին դարձնել իշխանությունների խոստովողն ու զենքը: Ադրբեջանի իշխանություններն իրենց գրաքննչական ծայրահեղ խստություններով և գրականության կուսակցականության մասին ցուցումներով ու առաջադրանքներով ամեն ինչ անում էին Արցախում գրականությունն ազգային նկարագրից հեռու պահելու համար: Դա է պատճառը, որ գրականության մեջ բացահայտ չէին արտացոլվում ո՛չ արցախյան ողբերգությունը, ո՛չ հայ մարդու ինքնության ու Արցախի դիմագծի դեմ կատարված վայրագությունները, ո՛չ հայրենի բնաշխարհին արյունաքամ անող արտահոսքն ու հայ տարրի բնաջնջման վտանգը: Արգելվում էր Արցախի փառավոր պատմությունը դարձնել գրողի ներշնչանքի աղբյուր:

Վերոհիշյալ պահանջներից դժգոհ՝ գրողներից շատերը դարձան նվազ բեղուն, իսկ ուրիշները հեռացան հայրենի երկրից: Հայաստանի գրականության բոլոր ժամանակների մեջ նկատելի է Արցախից Հայաստան տեղափոխված գրողների ներկայությունը: Բավարարվենք՝ հիշելով Աշոտ Գրաշուն, Արշավիր Դարբնուն, Բոգդան Ջանյանին, Բագրատ Ուլուբաբյանին, Ջորի Բալայանին:

Մի առիթով խոսելով Արցախում ստեղծվող գրականության մասին՝ անվանի բանաստեղծ Ռ. Դավոյանը գրել է. «Անհերքելի է, որ մեր ժողովրդի՝ հիացմունքի արժանի արցախյան հատվածը, իր պատմական ճակատագրի բերումով շատ ավելի է ստիպված եղել ռազմիկ լինելու, քան բանաստեղծ, ու սա էլ բնավ չի նշանակում, թե նրա ներսի շերամն իր քնարական մետաքսը չի հյուսել, նրա սրտի ծորիկը չի երգել մերժումի անփարատելի գիշերվա մեջ, կամ ծննդաներ չեն շողշողացել աչքերում՝ շրջապատի ծով գեղեցկությանն ու նազանքին ի խնդություն...»:¹

Ինքնին պարզ է, որ բանաստեղծները, անկախ պայմաններից ու իրավիճակից, հյուսել և այժմ էլ հյուսում են իրենց երգը: Սակայն պայմանավորված սոցիալ-քաղաքական ու այլ հանգամանքներով՝ նրանց երգերը միշտ էլ ունեցել են որոշակի յուրահատկություններ: Այսպես՝ Արցախի յուրահատուկ վիճակը թե՛ Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակ, թե՛ նրան հաջորդող տասնամյակներում ունեցել է բարդություններ, որոնք, բնականաբար, իրենց ազդեցությունն են թողել գրողների ստեղծագործությունների թե՛ բովանդակության, թե՛ լեզվական արվեստի վրա: Ադրբեջանի իշխանության տակ գտնվելու ժամանակ ընդհանուր քաղաքական անհանդուրժողականությանը՝ խոսքի ազատության հարցում, Արցախում ավելանում էր ազգային դաժան ճնշման մթնոլորտը, որի պայմաններում գրողը զուրկ էր իր մտքերն ու զգացմունքները ուղղակիորեն արտահայտելու հնարավորությունից և ավելի հաճախ, դիմելով փոխաբերության, հայրենիքի կորստյան տագնապները, հայի՝ խաչվող ու հառնող, տառապող ու վերածնվող ճակատագրի, հայրենիքի տառապալից անցյալի ու անորոշ ապագայի, լքված գյուղերի ու պապենական օջախների հետ կապված հարցերը հնչեցնում էր ենթաբնագրային արծարծումներով: Պատմական յուրահատուկ հանգամանքները շարունակվեցին հետագա տարիներին, այս անգամ, իհարկե, այլ կերպ:

1980-ական թվականների վերջերին Արցախում ստեղծագործող բանաստեղծների խոսքը դարձավ ավելի վճռական ու հետևողական, որովհետև դա շարժման նախօրյակն էր, և բանաստեղծներից շատերը գիտակցում էին, որ պատմության դատաստանի անողոք քննությանը հանձնված Արցախի ճակատագիրը պետք է շրջվի, և արցախցին հայրենի հողի վրա պետք է նվաճի իր ապրելու իրավունքը, տեր կանգնի հին ու նոր ժամանակներում կորցրած իր հողերին: Այդպես էլ եղավ: Արցախյան գոյապայքարն արթնացավ, զարնային գետի պես հորդեց և բանաստեղծների ստեղծագործական կյանքում նշանավորեց նոր շրջան: Ձերբազատվելով նախորդ տասնամյակների նախապաշարումներից ու «հարկադիր մտածողության» հոգեբանությունից՝ արցախյան գրականությունը գնաց գեղագիտական հայացքի խորացման փիլիսոփայական-խոհական ավելի մեծ ընդհանրացումների, համարձակ ու անկանխակալ լուծումների ուղիով, ասել է թե՛ արվեստի լեզվով ճշմարիտ խոսք ասելու հնարավորությունը վերահաստատեց իր կյանքի անցագիրը: 1991թ.

¹ Վ. Հակոբյան, Արցախա ծուխ, Եր., 1989, էջ276:

նոյեմբերին Արցախում բռնկվեց պատերազմ: Պատերազմին զինվորագրվեց ողջ հայ ժողովուրդը, սակայն ամենօրյա, հաճախ ամենժամյա դաժան գնդակոծությունները, վայրագություններն ուղղակիորեն իր վրա կրողը Արցախի ժողովուրդն էր: Ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, երբ, կորցնելով հավատը «<վերևների>> նկատմամբ, մենակ մնալով իր դաժան ճակատագրի հետ, արցախցին բացվող ամեն օր «<լույս էր աղերսում>>, իսկ դրան հակառակ՝ «<տառապանքը խորանում էր վայրկյաններով>>»:

Այս և այլ պատճառներով պոեզիան դարձավ ավելի զգայուն, ծնվեցին պատմականությամբ ու արդիականությամբ միահյուսված երգեր, որոնցում ազատագրական պայքարը, ժողովրդի ազատագրական ոգին, պատերազմական իրադարձություններն արտացոլվեցին առավել անմիջականորեն և առավել խտացված ձևով: Հայրենիքի և ազատագրական պայքարի թեման որակափոխեց պոեզիայի ինչպես բովանդակությունը, այնպես էլ ձևը: Պատկերավորման համակարգի մեջ հետզհետե սկսեցին իրենց զգալ տալ թարմ շերտեր, նոր երանգներ, որոնք գնալով ընդգծվեցին ու առանձնացան՝ ստանալով ռճական ու գեղագիտական նոր արժեք:

Փոխաբերությունը, որպես ռճական հնարանք, դարձավ արցախյան պոեզիայի առանցքը և Արցախի բանաստեղծների համար ծառայեց միջոց ոչ միայն իրենց խոսքը պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու, այլև շոշափելու այնպիսի թեմաներ, որոնց մասին խորհրդային շրջանում արգելվում էր խոսել, իսկ շարժման տարիներին դրանք ստեցել էին նոր երանգներ ու բովանդակություն:

Ռճական այս միջոցն էլ մեր սույն հոդվածի քննության առարկան է: Ուսումնասիրվող կտրվածքի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ շարժմանն անմիջապես նախորդող և հաջորդող տարիներին բանաստեղծներն առավել խտացված ու անմիջական են ներկայացրել պատմական դեպքերն ու իրադարձությունները: Նրանց խոսքը դարձել էր ավելի վճռական և ավելի հաստու: Վերլուծությունը կատարել ենք ոչ թե ըստ առանձին հեղինակների, այլ ըստ Արցախը ներկայացնող պոեզիային հատուկ ընդհանուր հատկանիշների:

Փոխաբերությունը, ինչպես նշում է Շ. Բալլին, ոչ այլ ինչ է, եթե ոչ համեմատություն, որում բանականությունը ավանդույթի ազդեցությամբ մոտեցնում է վերացական հասկացությունը և կոնկրետ առարկան, զուգակցում դրանք մեկ բառում¹: Նրա ճիշտ գործածությունը մեծ չափով կախված է գրողի հմտությունից, նրա վարպետությունից, իրականության զանազան երևույթների միջև եղած նմանությունները, կապերն ու հարաբերությունները տեսնելու, ընկալելու հատկությունից: Դեռ ժամանակին Արիստոտելը նկատել է. «< Ամենից կարևորն է հմտորեն օգտվել մետաֆորներից: Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը>>»² Որքան գրողը ճիշտ կարողանա համադրել բառի որոշակի նշանակությանը նրա փոխաբերական իմաստը՝ ելնելով դրանց միջև եղած կապից ու բնութագրվող առարկաներին վերագրվող հատկանիշից, այնքան փոխաբերությունը վառ ու տպավորիչ կլինի:

Արցախյան պոեզիայում փոխաբերական նշանակություն են արտահայտում ինչպես երկանդամ ու բազմանդամ բառակապակցությունները, այնպես էլ ամբողջական նախադասությունները, բանաստեղծը՝ վերածվելով բանաստեղծական ավարտուն պատկերների, աչքի ընկնելով արտահայտչականությամբ, գեղարվեստական ներգործուն ուժով, իմաստային փոխադարձ կապերով : Փոխաբերության լավագույն օրինակ է Վ. Հակոբյանի «<Պարոն Ներուդային>> բանաստեղծությունը: Խոռվքի մեջ գտնվող բանաստեղծի համար կյանքը դառնում է «<կորստի անվերադարձ ճիչ>>»:

Անհասկանալի օրերի միջից

**Ես ինձ գտնում եմ հոգսով ծանրաբեռ, հոգով վիրավոր, խաբված ամենքից,
Ու կարոտում եմ հեռու եզերքի, հեռու օրերի, մանկությանս, ինձ: 7,106**

Անդրադառնալով այս բանաստեղծությանը՝ Ս. Սարինյանը գրել է. «<Կարելի է ինքն իրեն հասկանալ կամ չհասկանալ, դժգոհ լինել իրենից կամ հիանալ իրենով, ընդվզել իր դեմ կամ խոռվել

¹ Տե՛ս՝ Балли Ш., Французская стилистика, М., 1961, էջ 17:

² Արիստոտել, Պոետիկա, Եր., 1955, էջ 202:

իրենից, բայց կարոտել ինքն իրեն՝ իսկապես որ գեղեցիկ գյուտ է և հոգեբանական իր ակունքներով աղերսվում է կորսված պատրանքների ափսոսանքին»:¹ Մեզ մնում է ավելացնել, որ այդ «գեղեցիկ գյուտը» փոխաբերության արտահայտություն է:

Ռ. Եսայանի «Հայաստան» բանաստեղծությունը ևս փոխաբերական մտքի մի խտացում է, որտեղ ընդգծվում է այն, որ Հայաստան կոչվող մեր փոքրիկ երկիրը ապագային նետած իր բոլոր խոյանքներով, վերելքներով, խիզախումներով ու կարոտներով փնտրում է ո՛չ փառք, ո՛չ էլ նոր բախտ, այլ միայն իրենից խլածը, ինքն իրեն:

**Ճանապարհդ՝ լույս հետքերից հյուսված ուռկան,
Որ նետել ես հորձանքի մեջ Ապագայի-
Դու միտք չունես ձուկ որսալու և ոչ էլ փառք,
Այլ՝ ինքդ...քեզ,
Այլ՝ ինքդ քեզ: 5,3**

Հայրենի հողը ազգը դեպի հավերժություն տանող միակ ճշմարիտ լույսն է, իսկ լեզուն՝ նրա երթի դրոշմը: Այս մտքի փոխաբերական խտացումն է Ռ. Եսայանի «Հիշողություն» բանաստեղծությունը:

**Հուշերիս մեջ դեռ կան արյան խիզախ շիթեր...
Նրանց համար լույսը հող էր,
Լեզուն՝ դրոշ,
Ու պարսպված խենթ ձիերի
Սմբակներից,
Ճանապարհը դառնում էր թուր, դաշտն՝ ավարայր,
Եվ բախումը նրանց հող էր,
Հող էր դարը,
Վայրկյանը՝ հող...5,20**

Ռ. Եսայանի մի շարք երգերում զգացվում է տազնապ՝ կապված հայրենիքի կորստի հետ: Բանաստեղծը քաջ գիտակցում է, որ հայրենի երկրի կորուստներն այնքան շատ են եղել, որ Արցախի կորուստը բազում կորուստներ տեսած հայոց երկրի համար կդառնա վերջինն ու ճակատագրականը: Այդ ամենի գիտակցումով էլ նա եզակի փոխաբերություններով տազնապը հնչեցնում է որպես զգոնության կանչ:

**Արդ դողանջում են իմ արմատները
Խրված պապերիս երգների մեջ,
Եվ բարձրացնում է այն, ինչ անտեր էր
Կորստի կարմիր խորխորատի մեջ,-
Այդ մասնիկով եմ զգում ...Ամբողջը: 5,29**

Փոխաբերական մտքի յուրօրինակ խտացում է նաև Հր. Ալեքսանյանի «Վճիռ և հույս» բանաստեղծությունը: 1923-ից ի վեր ցավը սրտում ու երազները թաքուն պահած՝ արցախահայությունը 1965-ից սկսած՝ մի քանի անգամ փորձել է ազատվել իրեն պարտադրված ստրկությունից, սակայն նրա այնքան ազնիվ ու մարդկայնորեն այնքան ըմբռնելի ձգտումը միշտ էլ ճգնվել է իր իսկ սաղմի մեջ: Մայր երկրի հետ ամեն կապ ու հարաբերություն, ազգային պատմության ու հիշողության ամեն արձագանք ամբաստանվել է ազգայնամոլության աններելի մեղքով:

**Մեղք է կարոտը,
Նա ամբողջովին չի հասունանում...
Պատժում են՝
Լրիվ չբացահայտված.../8,19/**

¹ Ս. Սարիկյան, Բանաստեղծի հայտնությունը, Ստեփ., 1998, էջ 9:

Իր այդ վիճակի մեջ, սակայն, երազը չի խամրում, չի ընկճվում, քանզի արդար ու առողջ հույսերը չեն մեռնում, որքան էլ դաժան լինեն պատիժները:

**Առողջ հույսերը չեն հուսահատվում:
Ի՞նչ հուսահատվել,
Երբ նրանց փոշոտ բեկորներն են մեկ-մեկ հավաքում: /8,19/**

Մեծ թիվ են կազմում այն փոխաբերությունները, որոնք համեմատությունների անմիջական արդյունք են: Փոխաբերության վառ պատկերներով, բնության հրաշալիքների և մարդկային առաքինությունների թվարկումով Վ. Հակոբյանի «Ես երգ չունեմ Ղարաբաղի մասին» բանաստեղծության մեջ Ղարաբաղը ներկայացվում է որպես ծառ՝ իր արմատի վրա, սեր՝ հավատի վրա, երգ՝ ճառագած սրտերից և այլն: Ղարաբաղը պիտի հավերժի, որովհետև ինչպես բանաստեղծն է խոստովանում.

**Ղարաբաղը ելք է՝ բացված սրտի նման,
Ղարաբաղը երգ է, բառեր չունի սակայն,
Իմ պապերի ձայնով միայն երգեցեք այն: /7, 61/**

Փոխաբերությունների անմիջական արդյունք է Ռ. Եսայանի «Գանձասար» բանաստեղծությունը, որտեղ բանաստեղծը ընդհանրություն է տեսնում վանքի արձանագրություններով երիզված դռան և բաց անձնագրի, արձանագրություններով գրերի և մեր իմացապաշտ ու երկնող ոգու, տողի և արցախյան հողի վրա դեպի անվերջություն թևածող մեր ինքնության միջև: Վանքի առանցքն աղեղն է Հայկի, սյուները՝ հրածին նետեր, գմբեթը՝ էպոս կարծրացած: Բանաստեղծությունն ամբողջությամբ արտահայտում է փոխաբերական իմաստ: Հեղինակն ընդգծում է այն միտքը, որ Արցախի պատմությունը հին ու միշտ արարող դյուցազներգություն է՝ Հայկ Նահապետից մինչև մերօրյա պայքարը, ազատ ապրելու համար մղվող դյուցազներգություն.

**Դուռդ անձնագիր է բացված,
Խուցերդ՝ ծնկաչոք քարեր,
Դու կապրես, կլինես դարեր-
Գմբեթդ՝ էպոս կարծրացած:
Մկաններ են գրերը քո ծուռ,
Ճակատիդ տողը՝ տիեզերք,
որ հավքիդ թևով է բացվում: /4,18/**

Իրենց բանաստեղծական խոսքը ոճավորելու համար բանաստեղծները հաճախ են դիմում նաև փոխանունությանը, որը փոխաբերության արտահայտություններից մեկն է: Փոխանունությունը բառերի փոխաբերական գործածության այնպիսի եղանակ է, որ բուն, սովորական փոխաբերություններից ոճական գործառնությունով համարյա չի տարբերվում: Տարբերությունը հիմնականում բառերի փոխաբերական գործածության ձևերի մեջ է, այստեղ փոխաբերությունը կառուցվում է ոչ թե առարկաների կամ երևույթների նմանությամբ, այլ նրանց գույնգործության, ինչպես նաև նրանց միջև եղած որոշակի կապի հիման վրա: Փոխանունությունը ունի իր տարբեր դրսևորումները՝ պայմանավորված առարկաների առնչության բնույթով:¹ Այդ առարկաների, երևույթների առնչությունները տարբեր են լինում / մասի և ամբողջի, պարունակողի և պարունակյալի, գործողի և գործի, չափի և առարկայի, եզակիի և հոգնակիի հարաբերություն և այլն/:

Ընդհանուր երևույթը եզակի և մասնավոր դրվագով արտահայտելու փայլուն օրինակ է Ռ. Եսայանի «Լուսաբացի քանի օրորոց է քերել» բանաստեղծությունը.

¹ Տե՛ս՝ Ս. Աբրահամյան, Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, Եր., 1982, էջ 69:

**Լուսարացի քանի՞ օրորոց է քերել
Թուրքը հայոց արգանդից բեղուն,
Քանի՞ երագ ու տենչ հանդգնորեն գերել,
Որ դեռ թայրտում են մահի ուռկաններում:
Քանի՞ աչքի տաճար փռչիացել անհետ
Ու հառնել է մի օր վերքերի մեջ հայի,
Ցավերի մեջ հայի լեռնացել են մահեր
Ու փշրվել են գահեր...կանչով Ավարայրի: /5,124/**

Հասարակական բովանդակության ինչպիսի՞ խորություն կա այս պատկերի մեջ, ազգային վշտի ինչպիսի՞ ընկալում: Բառերի փոխանվանական կիրառությամբ բանաստեղծն ուժեղացրել է իր խոսքի հնչեղությունն ու ներգործման թափը և եզակի հայի մեջ խտացրել մի ամբողջ ժողովրդի պատմական ողբերգությունը:

Մեր անհուն ցավի նկատմամբ չար աշխարհի անտարբերությունն ընդգծելու համար բանաստեղծը կրկին դիմել է փոխանունության :

**Թայրտում է հոգիս մենակության ցանցում:
Իմ հույսերի բոլոր սենյակներն են փակ:
Չկա մի ձայն: Մի ձեռք: Մի բախտորոշ անցում:
Շուրթը շրթի վրա ` երազասպան մի փառ: /5, 26/**

Ըստ իրենց բաղադրատարրերի իմաստների ու հարաբերության՝ փոխաբերությունը ունի մի քանի դրսևորումներ ևս, որոնցից Արցախի բանաստեղծների խոսքարվեստի համար բնութագրելի են հատկապես անձնավորումն ու խորհրդանշանը: Արցախյան պոեզիայում, ինչպես գեղարվեստական խոսքում ընդհանրապես, բնության երևույթների անձնավորումը կատարվում է որոշակի ոճական նպատակադրումներով: Բնության շնչավորումն օգնում է առավել նրբորեն բացահայտելու հույզերն ու ապրումները, պատկերվող նյութն ընդգրկելու խորությամբ, խոսքը դարձնելու առավել հուզիչ ու ներգործուն: Անձնավորման միջոցով բանաստեղծները բնության բոլոր երևույթների ներդաշնակությունը բերում են հասարակական կյանքի ոլորտները և մարդուն ստիպում սովորել իր մեծ ուսուցչից՝ բնությունից:

**Ուրցը ծաղկում է քարերի վրա,
Մի հավատարիմ սիրահար է նա,
Ծաղիկ շուրթերով քարը համբուրում,
Փարվում է նրա չոր կրծքին, բուրում:
Ուրցը ուրիշ տեղ , չէ, չի կանաչում,
Քարից զատ ուրիշ սեր չի ճանաչում: /1,26/**

Արցախի բնության մեջ բանաստեղծները տեսնում են այն խնդիրները, ինչ այսօր էլ հուզում են արցախցուն: Այսպես՝

**Լեռներս ծարա՛վ, ծարա՛վ,
Գետերս ուր եք գնում,
Լեռներում կարկաչելով՝
Դաշտերում լույս եք ծնում:
Խմում ու չեն կշտանում
Ծովերը խուլ ու անտակ,
Ա՛խ, այդպես ինենթ ու իսելառ,
Գետե՛րս, գուր եք գնում: /1, 24/**

Այս գողտրիկ բանաստեղծությամբ ժամանակին Հր. Բեգլարյանը արտահայտել է իր մտահոգությունը հայրենի բնաշխարհն արյունաքամ անող արտահոսքի նկատմամբ:

Վերածնվող աշխարհի և անցողիկ անհատի փոխհարաբերությունների հիմքի վրա կատարված ընդհանրացումներով աչքի է ընկնում Վ. Հակոբյանի «Կրկնություն հին դասի» բանաստեղծությունը: Այստեղ անձնավորված են անձրևը, վայրկյանը, քամին, հողը, ծառը, որոնց

փոխհարաբերությունների նկարագրից ծնվում է ծառի և հողի կեցության անզուգական օրինակը՝ անհատի և ժողովրդի զուգահեռներով: Անձրևը պետք է հողը քշեր և տաներ, բայց քանի որ ծառն արմատներ նետեց, հողն ու ծառը ապրեցին դաշնությամբ.

**Ու հողը մնաց... ծլեց ու ծաղկեց,
Ու ծառը մնաց- երբեք չճկվեց... /7,102/**

Արցախյան պոեզիան հարուստ է նաև խորհրդանշական պատկերներով, որոնցից յուրաքանչյուրը, լինելով որոշակի առարկայական պատկեր, պայմանականորեն իր հիմքում ենթադրում է ինչ-որ այլ երևույթ, իմաստ ու բովանդակություն:

Խորհրդանշանի բնորոշ առանձնահատկությունը տվյալ գեղարվեստական օբյեկտը ներկայացնող իմաստի պայմանականությունն է: Իմաստային զուգորդությունները հաճախ հարատևում են ողջ պատումի մեջ՝ նրան հաղորդելով խոր հուզականություն:

Արցախի պոեզիայում խորհրդանշանի լավագույն օրինակ է **կաղնին**, որն ամեն մի փորձության դիմակայելու, հարատևելու խորհրդանիշն է, կաղնին արցախցին է, Արցախի ժողովուրդը.

**Իզուր է փորձում
Հողմը կատաղի
Արմատից պոկել
Այս հսկա կաղնին...
Նա գորացել է
Պայքարի բովում՝
Պիրկ արմատները
Ժայռում ու հողում... /3, 16/**

Պատահական չէ, որ մեր լեռնաշխարհը հարուստ է կաղնիներով:

**Լեռների վրա ուռի չի աճում
Ուռի չեն ծնում լեռները, իրավ...
Այնտեղ կաղնին է ձգվում, կանաչում,
Ճյուղերում պահած պապիս «հո արան»:
Արմատով ասես ձևում են շանթեր՝
Շանթով ամրացած ձիգ կաղնիները:
Մենք հո ուռենի չենք կարող լինել,
Կաղնիք են եղել մեր նախնիները: /6, 44/**

Խորհրդանշական է նաև անտառի պատկերը: Այն հայրենիքի հավերժության և մարդկային կյանքի խորհրդանիշն է.

**Հարատևում է անտառը կանաչ,
Թեև տեսել է զոհեր ու հառաչ,
Ընկած ծառի տեղ նորերն են ելել,
Կյանքն ամեն գարնան ծաղկել է, թնել.
Հարատևել է, մնացել ջահել
Անտառը կանաչ, անտառը անմեռ... /2, 15/**

Արցախի աշխարհը չորս կողմից շրջապատված է լեռներով, որոնք և մեր պատմության խորհրդանիշն են, մեր ամուր հավատի և հույսի խորհրդանիշը:

**Լեռների դուռը բացում եմ ահա,
և դուրս է գալիս
այնտեղից, նայե՛ք, Արգիշտի արքան՝**

**աչքերում ի մի բերվող մի երկինք:
Լեռների դուռը բացում էմ ահա, և դուրս է գալիս
այնտեղից, նայե՛ք հավերժությունը
/մենք նրան Մաշտոց անունն ենք տվել/: 7,276**

Եվ այսպես՝ Արցախի պոեզիայում ծառը ներկայացվում է որպես սերունդներին իրար կապող, հայկյան նետը՝ արիության, սերնդափոխության, պապ-հայր-թոռ եռյակը՝ երկրի և նրա ժողովրդի միասնական հավերժության, սիրո, մայրության, տառապանքի ու մեր ազգային գոյության խորհրդանիշ:

**Աշնան ցավերից կմեռներ ծառը,
թե բույրն իր պտղի
իր իսկ արմատով, հողով չիմանար,
թե տերև-տերև չապրեր բերկրանքը
ծաղկման, հավերժի և կանաչության: /6, 85/**

Այսպիսով՝ Արցախի բանաստեղծների երգերում բառերը, կապակցություններն ու նախադասությունները, փոխելով խոսքային միջավայրը, արտաքին միևնույն կեղևի տակ ստանում են միանգամայն նոր ու անսպասելի իմաստներ, փոխաբերական նշանակություններ՝ ծառայելով իբրև մտածողության և խոհի սլացիկ ու պատկերավոր արտահայտության բանաստեղծական միջոց ու ձև:

Սկզբնաղբյուրներ

]

1. Հր. Բեգլարյան, Հրաշք երկիր իմ Ղարաբաղ, Եր., 1980:
2. Հր. Բեգլարյան, Գետերը չեն հոգնում, Բ., 1981:
3. Հր. Բեգլարյան, Իմ տունը, Բ., 1987:
4. Գրական Ղարաբաղ, Ե., 1988:
5. Ռ. Եսայան. Նժար, Ստեփ., 1995:
6. Վ. Հակոբյան, Արցախսա ծուխ, Եր., 1989:
7. Վ. Հակոբյան, Մենարան, Եր., 1996:
8. Հր. Ալեքսանյան, Անկման սիմետրիան, Ե., 1996:

Օգտագործված գրականություն

1. Արիստոտել, Պոետիկա, Եր., 1955:
2. Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003:
3. Ս. Սարինյան, Բանաստեղծի հայտնությունը, Ստեփ., 1998:
4. Ս. Արրահամյան, Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները, Եր., 1982:
5. Балли Ш., Французская стилистика, М., 1961: